# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

# ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՎՁՄ-ՄԱԾՁԲ-04/21

«19» փետրվարի 2021 թ.

ք. Եղեգնաձոր

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը , ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա.Կարապետի , որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա.Ձ Վարդան Պողոսյանը, ի դեմս տնօրեն Վ. Պողոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության __2_____ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __3___ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 756000 /յոթ հարյուր հիսունվեց հազար / ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

---

[1] Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

[2] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:[3]

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

---

[3] Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է __6__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ք.Եղեգնաձոր, Շահումյան 5

ՀՀ ֆին. Նախ. Գործառնական վարչ.

ՀՎՀՀ 08907717

Հ/Հ 900351051025

------Ա.Կարապետյան

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Ա.Ձ Վ.Պողոսյան

Վայոց ձորի մարզ

ք.Եղեգնաձոր,Կամոյի 2/14

ՀՎՀՀ 76812061

ԱԵԲ Եղեգնաձորի մասնաճյուղ

Հ/Հ 2475800479980000

Տնօրեն ------ Պողոսյան

Հավելված N 1

«19» 02 21 թ. կնքված

ՎՋՄ-ՄԱԾՁԲ-04/21 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50111170 | Ներկայացվում է ստորև | Հազ.դրամ | 84000 | 1 | Ք.Եղեգնաձոր | |
| 2 | 50111170 | Ներկայացվում է ստորև | Հազ.դրամ | 51000 | 1 | Ք.Եղեգնաձոր | |
| 3 | 50111170 | Ներկայացվում է ստորև | Հազ.դրրամ | 437500 | 1 | Ք.Եղեգնաձոր | |
| 4 | 50111170 | Ներկայացվում է ստորև | Հազ.դրամ | 183500 | 1 | Ք.Եղեգնաձոր | |

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

1. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված առավելագույնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում և երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինումով ծառայության դեպքում: Առանձին դեպքերում՝ Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետ:
2. Նորոգված հանգույցի 6 ամսվա երաշխիք:
3. Ծառայությունները մատուցվեն ըստ պատվիրատուի պահանջի:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| N | SU-1, SU-2 ծառայություններիևSU-2 ընթացքումօգտագործվողպահեստամասերիցսայուղերիևայլօժանդակնյութերիանվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 1 չափաբաժին | 2 չափաբաժին | 3 չափաբաժին | 4 չափաբաժին |
| | | ՎԱԶ 21074 2951LL11 | ՎԱԶ 2121 423LL60 | NISSAN X trail 031LL55 | TOYTA Camri 420LL60 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | | | | |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | | | | |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | | | | |
| 4 | Արտածման համակարգի ստուգում | | | | |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | | | | |
| 6 | ՓՏ-ի աշխատանքի ստուգում | | | | |
| 7 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | --------------- | | | |
| 8 | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | | | | |
| 9 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | | | | |
| 10 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | | | | |
| 11 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | | | | |
| 12 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | | | | |
| 13 | ABS համակարգի ստուգում | --------------- | | | |
| 14 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | | | | |
| 15 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | | | | |
| 16 | Թափքի վիճակի ստուգում | | | | |
| 17 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | | | | |
| | **SU-2 ներառվող ծառայությունների անվանում** | | | | |
| 18 | Շարժիչի հանում և տեղադրում | | | | |
| 20 | Նույնը կոնդիցիոների դեպքում | --------------------- | | | |
| 21 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | --------------------- | | | |
| 22 | Շարժիչի վերանորոգում | | | | |
| 24 | Նույնը V6-ի դեպքում | --------------------- | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 25 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | | | | |
| 33 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | | | | |
| | **2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | |
| 62 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | | | | |
| 63 | Բռնկման կարգավորում | | | | |
| 64 | CO կարգավորում | | | | |
| 65 | Խառնարանի հանում և տեղադրում | | | | |
| 66 | Խառնարանի վերանորոգում | | | | |
| 67 | Օդի զտիչի փոխարինում ներառյալ օդազտիչ | 3500 | 3500 | 6000 | 6000 |
| 69 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | | 5000 | 10000 | 10000 |
| 71 | Վառելիքի զտիչի փոխարինում ներառյալ զտիչը | 3000 | 3000 | 15000 | 15000 |
| 173 | Տրամբլյորի հանում և տեղադրում | | | | |
| 74 | Տրամբլյորի վերանորոգում | | | | |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | |
| 80 | Ռադիատորի վերանորոգում | 3000 | 4000 | 7000 | 6000 |
| 81 | Թերմոստատի փոխարինում ներառյալ թերմոստատը | 6000 | 6000 | 12000 | 12000 |
| 82 | Ջրի պոմպի փոխարինում ներառյալ ջրի պոմպը | 15000 | 15000 | | 45000 |
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | |
| 94 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | | | | |
| 95 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | | | | |
| | **5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | | | |
| 113 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | | | | |
| 115 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | | | | |
| | **6. Առջևի և հետևի կամրջակներ** | | | | |
| 120 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում | | | | |
| 121 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | | | | |
| | **7. Կախոց** | | | | |
| 125 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | | | | |
| 131 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | | | | |
| 132 | Զսպանակի հանում և տեղադրում | | | | |
| 135 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | | | | |
| 136 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 137 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | | | | |
| 142 | Վերևի լծակի վռանների փոխարինում | | | | |
| 143 | Գնդե հոդակապերի փոխարինում | | | | |
| 149 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | | | | |
| | **8. Ղեկային մեխանիզմ** | | | | |
| 159 | Ղեկային կալոնի վերանորոգում | | | | |
| 160 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում | | | | |
| 161 | ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում ներառյալ պահեստամասը | 5000 | 10000 | 15000 | |
| | **9. Արգելակային համակարգ** | | | | |
| 176 | Արգելակային համակարգի օդահանում | | | | |
| 182 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում /ներառյալ կոճղակները/ | 8000 | 10000 | 20000 | 20000 |
| 183 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում/ Ներառյալ կոճղակները/ | -----------------------<br>----- | | 18000 | 18000 |
| 184 | Հետևի կոճղակների փոխարինում Ներառյալ պահեստամասը | 7000 | | | |
| 185 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում ներառյալ պահեստամասը/զույգ/ | 22000 | | 40000 | |
| 188 | ABS-ի հանում և տեղադրում | -----------------------<br>----- | | 4000 | 4000 |
| 189 | ABS-ի վերանորոգում | -----------------------<br>---- | | 5000 | 5000 |
| 191 | Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում /Ներառյալ պահեստամասերը/ | 6000 | 6000 | | 13000 |
| | **10. Այլ ծառայություններ** | | | | |
| 192 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում | | | | |
| 193 | Ավտոմեքենայի լվացում | | | 110000 | |
| 194 | Անիվի հանում և տեղադրում | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 195 | Անվադողի տեղադրում Ներառյալ անվադողը | | | | 125000 |
| 196 | Անիվի բալանսավորում | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 197 | Անիվի վալց | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 198 | CO-զոդման աշխատանքներ. | 10000 | | | |
| 200 | Ակումլիատորային մարտկոցի տեղադրում. Ներառյալ մարտկոցը 60 Ա | 23500 | | | |
| 201 | Փականագործի աշխատանքներ | | | | |
| | **SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քաշուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | | | | |
| | **1. Շարժիչ** | | | | |
| 3 | Բարձիկ | | | | |
| 4 | Շարժիչի գլխիկի միջադիր | | | | |
| 5 | Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ | | | | |
| 7 | Շարժիչի փական դուրս մղող | | | | |
| 8 | Շարժիչի փական ներս մղող | | | | |
| 9 | Շարժիչի փականի խցուկ | | | | |
| 11 | Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի | | | | |
| 12 | Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի | | | | |
| 13 | Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ | | | | |
| 14 | Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ | | | | |
| 15 | Հենակային տափողակ | | | | |
| 16 | Մխոց | | | | |
| 17 | Մխոցային օղակներ | | | | |
| 20 | Շղթա | | | | |
| 21 | Հիդրոծգան | | | | |
| 22 | Հրիչ | | | | |
| 23 | Հիդրոհրիչ | | | | |
| 24 | Բաշմակ | | | | |
| 25 | Հանգստարար | | | | |
| 31 | Կարտերի միջադիր | | | | |
| 32 | Միջադիր | | | | |
| | **2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | |
| 50 | Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման ,ներառյալ փոխարինելը | | | | |
| 53 | Օդի զտիչ ,ներառյալ փոխարինելը | | | | |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 69 | Ռադիատորի փողրակ , ներառյալ փողարինները | | | | |
| 70 | Թերմոստատ, ներառյալ փողարինները | | | | |
| 71 | Ջրի պոմպ | | | | |
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | |
| 90 | Կցորդման տանող սկավառակ | | | | |
| 92 | Կցորդման առանցքակալ | | | | |
| 93 | Կցորդման փողրակ | | | | |
| | **5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | | | |
| 121 | Կարդանային լիսեռի խաչուկ, ներառյալ փողարինները | 5000 | 12000 | 0 | |
| | **6. Առջևի և հետևի կամրջակներ** | | | | |
| 130 | Կիսասռնի | | | | |
| 131 | Կիսասռնու առանցքակալ | | | | |
| 132 | Կիսասռնու միջադիր | | | | |
| 133 | Կիսասռնու խցուկ | | | | |
| | **7. Կախոց** | | | | |
| 140 | Անվակունդի ներքին առանցքակալ | | | | |
| 141 | Անվակունդի արտաքին առանցքակալ | | | | |
| 145 | Հարվածամեղմիչի թասակ | | | | |
| 147 | Առջևի հարվածամեղմիչ | | | | |
| 148 | Հարվածամեղմիչի փոշեթիկնոց | | | | |
| 149 | Հարվածամեղմիչի վռան | | | | |
| 151 | Ներքևի լծակի վռան | | | | |
| 153 | Վերևի լծակի վռան | | | | |
| 154 | Գնդե հոդակապ | | | | |
| 159 | Հետևի ցնցամեղմիչ | | | | |
| | **8. Ղեկային մեխանիզմ** | | | | |
| 173 | Ղեկային կալունի առանցքակալ | | | | |
| 174 | Ղեկային կալունի խաչուկ, ներառյալ փողարինները | | | | |
| | **7. Արգելակային համակարգ** | | | | |
| 194 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ , ներառյալ փողարինները | | | | |
| 195 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ | | | | |
| 196 | Հետևի թմբուկ Ներառյալ փողարինները | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 197 | Առջևի արգելակային սկավառակ | | | | |
| 200 | ABS-ի տվիչ | | | | |
| 202 | Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ | | | | |
| | | 123000 | 80000 | 268000 | 285000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ ֆին. Նախ. Գործառնական վարչ.
ՀՎՀՀ 08907717
Հ/Հ 900351051025
ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
Գլխավոր քարտուղար

------------------- Ա. Կարապետյան

ԿԱՏԱՐՈՂ
Ա.Ձ Վ. Պողոսյան
ՀՀ Վայոց ձորի մարզ Ք. Եղեգնաձոր
Միկոյան փ 8 շենք/1
ՀՎՀՀ 84087474
ՀՀ 1601601036[illegible]
ՎՏԲ Հայաստան բանկ
Եղեգնաձորի մասնաճյուղ

Տնօրեն ------------- Վ. Պողոսյան

Հավելված N 2
N ՎՁՄ-ՄԱԾՁԲ-04/21
գնման պայմանագրի
«19» փետրվարի 2021 թ.

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջանցիկ համարը | ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111170-2 | ավտոմեքենաների պահպանման և վերանորոգման ծառայություններ | - | 75600 | 75600 | 264600 | 264600 | 264600 | 453600 | 453600 | 453600 | 756000 | 756000 | 756000 | 756000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ ֆին. նախ. Գործառնական վարչ.
ՀՎՀՀ 08903717
Հ/Հ 900351051025
ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
_____________ Ա.Կարապետյան

ԿԱՏԱՐՈՂ
Ա.Ձ Վ.Պողոսյան
ՀՀ Վայոց ձորի մարզ
Ք.Եղեգնաձոր, Կոմիտաս 2/14
ՀՎՀՀ 78612061
Հ/Հ 2475800079980000
ԱԿԲ բանկ Եղեգնաձորի մասնաճյուղ
Տնօրեն _____________ Վ.Պողոսյան

Հավելված 3
N ՎՑՄ-ՄԱԾՁԲ-04/21
**գնման պայմանագրի**
«8» փետրվարի 2021 թ.

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________ | ______________ |
| ______________ | ______________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________ | հհ ______________ |
| ______________ | ______________ |
| հվհհ ______________ | հվհհ ______________ |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________

*Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________ և*
*Պայմանագրի կողմը՝ ի դեմս______________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «______________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճա րմն ժամկ ետը /ըստ վճար ման ժամ անա կացո ւցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________ | ______________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________ | ______________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |

Հավելված 3.1

N ՎՁՄ-ՄԱԾԾԲ-04/21
գնման պայմանագրի
19 02 2021թ

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

սուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Ծառայությունը հանձնեց

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն

Ծառայությունն ընդունեց

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն